

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2014թ. հունիսի 9-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկայ էին 25-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Է. Շաթիրյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ.

1. Քրեական դատավարության նկրտիմի նախնական ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական զիտահետազոտական գործունեության մասին (ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս. Դիլրանդյան):
2. Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ Ս. Հովսեփյան):
3. Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ Ս. Վարդանյան):
4. ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրենի տարեկան հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ Ն. Ավագյան):
5. Իրավագիտության ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի գիտահետազոտական գործունեության արդյունքներին և 2014-2015թթ. ուսումնական տարվա համար դրա պլանավորմանը վերաբերող հարց (զեկ.՝ պրոֆ. Ա. Հայկյանց, ամբիոնների վարիչներ):
6. Իրավագիտության ֆակուլտետի դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունների հաստատում (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):
7. Հաղորդում 2013-2014 թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ պրոֆ. Հ. Խաչիկյան):
8. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության նկրտիմի նախնական ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական զիտահետազոտական գործունեության մասին (ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս. Դիլրանդյան):

Զեկուցողը համակարգված տեսքով ներկայացրեց տեղեկատվություն ամբիոնի կողմից կատարված ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակների և մեթոդների, ուսումնամեթոդական ծրագրերի վերանայման, քրեադատավարական օրենսդրության

մեջ տեղ գտած փոփոխություններով պայմանավորված՝ խնդիրների կազմման, նոր դասընթացների ներդրման, կուրսային, ՈԻԳԸ, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների արմատական վերանայման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքի վերաբերյալ:

Նշվեց, որ ամբիոնն առանձնակի ուշադրություն է դարձրել ուսումնաարտադրական պրակտիկայի ծրագրերի փոփոխման և լրացման հարցին, պատշաճ մասնակցություն ունեցել ՈԻԳԸ աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը՝ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում տեղ գտած իրավակարգավորումների շրջանակներում:

Զեկուցողն անդրադարձավ նաև ամբիոնի աշխատանքում տեղ գտած որոշ թերություններին, առկա խնդիրներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Ն. Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քրեականդատավարությանևկրիմինալիստիկայիամբիոնիհաշվետվությունըգնահատելըրական:

Հաշվետվությունը կցվում է արձանագրությանը:

2. ԼՄԵՑԻՆ. Իրավագիտությանֆակուլտետիուսանողականգիտականընկերությաննախագահիհաշվետվությունըկատարվածաշխատանքներիմասին (զեկ.՝ Մ. Հովսեփյան):

Ֆակուլտետիուսանողականգիտականընկերությաննախագահը համակարգված տեսքով ներկայացրեց 2013-2014թթ. ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում ընկերության ծավալած գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն կապված, մասնավորապես, գիտական բանավեճերի, սեմինար-քննարկումների, գիտաժողովների, դատախազերի, պետական մարմիններ, դատարաններ ուսանողների և մագիստրանտների այցերի կազմակերպման ու անցկացման հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը գոհունակություն հայտնեց 2013-2014թթ. ուսումնական տարում ընկերության ծավալած գործունեության կապակցությամբ՝ հույս հայտնելով, որ ընկերության նախաձեռնողականությունը վերը նշված հարցերով շարունակական կլինի և կատարված աշխատանքների ակտիվությունը չի նվազի:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ներկայացված հաշվետվությունը գնահատել դրական:

Հաշվետվությունը կցվում է արձանագրությանը:

3. ԼՄԵՑԻՆ. Իրավագիտությանֆակուլտետիուսանողականխորհրդինախագահիհաղորդումըկատարվածաշխատանքներիմասին (զեկ.՝ Մ. Վարդանյան):

Ֆակուլտետիուսանողականխորհրդինախագահըհամակարգված տեսքով ներկայացրեց 2013-2014թթ. ուսումնական տարում ֆակուլտետի ուսխորհրդի ծավալած գոր-

ծունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ կապված ուսխորհրդի կողմից ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ մի շարք միջոցառումների (ներֆակուլտետային և միջֆակուլտետային բանավեճեր, բարեգործական ծրագիր, <Դիմակահանդես> ամենամյա միջոցառում, <Ամենահինտեղեկտուալ իրավաբան> խաղ-մրցույթ և այլն) կազմակերպման և անցկացման հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը բարձր գնահատեց 2013-2014թթ. ուսումնական տարում ֆակուլտետի ուսանողական խորհրդի կատարած աշխատանքներն՝ ընդհանուր առմամբ և ուսանողական խորհրդի նախագահի և անդամների ջանքերը՝ ուղղված ֆակուլտետի ուսանողներին գիտաճանաչողական տարաբնույթ միջոցառումների ներգրավմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Հաղորդումը կցվում է արձանագրությանը:

4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրենի տարեկան հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ Ն. Ավագյան):

Իրավաբանական կլինիկայի տնօրենը ամփոփ ներկայացրեց 2013-2014թթ. ուսումնական տարում կլինիկայի ծավալած գործունեության վերաբերյալ տեղեկություններ: Մասնավորապես, նշվեց, որ 2013-2014թթ. ուսումնական տարվա ընթացքում կլինիկայում ձևավորվել են կամավորական խմբեր իրավագիտության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանողներից քաղաքացիաիրավական քրեաիրավական մասնագիտացումներով: Նշվեց, որ հիշատակված մասնագիտացումների գծով տեղի է ունեցել դասախոսական կազմի փոփոխություն: Նշվեց, որ ուսումնական տարվա ընթացքում՝ մինչև մայիսի 31-ը ներառյալ, կլինիկան ընդունել է 70 հաճախորդ սեփականության, ժառանգության, աշխատանքային և հեղինակային իրավունքների, ապահովագրության, փոխառության և բանկային պայմանագրերին, ամուսնալուծման և կնիքային իրավահարաբերություններին առնչվող խնդիրներով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը նշեց, որ վերջին տարիների համեմատ, կլինիկայի ծավալած գործունեության արդյունավետության բարձրացման առումով արձանագրվել է որոշակի տեղաշարժ:

Արտահայտվեցին նաև Ա. Իսկոյանը, Մ. Հովսեփյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ներկայացված հաշվետվությունը գնահատել դրական:

Հաշվետվությունը կցվում է արձանագրությանը:

5. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի գիտահետազոտական գործունեության արդյունքներին 2014-2015թթ. ուսումնական տարվա համարողապլանավորմանը վերաբերող հարցը (զեկ.՝ պրոֆ. Ա. Հայկյանց, ամբիոնների վարիչներ):

Ֆակուլտետի դեկանի տեղակալ Ա. Հայկյանը հաշվետվության տեսքով ներկայացրեց 2013-2014թթ. ուսումնական տարում ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի գիտահետազոտական գործունեության արդյունքներն արտացոլող ամփոփ ցուցանիշներն ըստ ամբիոնների: Ներկայացվեցին նաև վերլուծություններ 2013-2014թթ. ուսումնական տարում ամբիոնային գիտական հետազոտություններին ամբիոնների գիտահետազոտական գերակա ուղղությունների հարաբերակցության, ինչպես նաև իրավագիտության ֆակուլտետի գիտահետազոտական աշխատանքների շարժիվերաբերյալ ըստ նախատեսված, կատարված 2014-2015թթ. ուս. տարում նախատեսվող ծրագրի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը ֆակուլտետի ամբիոնների վարիչների ու շաղկրությունը հրավիրեց հաշվետվության մեջ ամբիոնների մասով արտացոլված ցուցանիշների վրա՝ պայմանավորված, մասնավորապես, նախատեսված կատարված գիտահետազոտական աշխատանքների քանակական ցուցանիշների միջև արձանագրված էական տարբերություններով:

Արտահայտվեցին նաև Ս. Դիլբանդյանը, Վ. Քոչարյանը, Վ. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ներկայացված հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Հաշվետվությունը կցվում է արձանագրությանը:

6. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունների հաստատմանը վերաբերող հարցը (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանն, անդրադառնալով օրակարգային վերը նշված հարցին, ներկաների ու շաղկրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ մագիստրատուրայի ընդունելության հայտերի միջև մագիստրոսական որոշ ծրագրերի գծով առկա է որոշակի անհամաչափություն: Սակայն քանի որ մագիստրատուրայի ընդունելության գործընթացը դեռևս չի ավարտվել, նպատակահարմար համարվեց հավանություն տալ ֆակուլտետի դասախոսների ամբիոնների կողմից ներկայացված անհատական ծանրաբեռնվածություններին:

Արտահայտվեցին նաև Ա. Վաղարշյանը, Ա. Պետրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հավանություն

տալ իրավագիտության ֆակուլտետի դասախոսների անհատական ծանրաբեռնվածություններին:

7. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում 2013-2014

թթ.

ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ պրոֆ. Ն. Խաչիկյան):

Դեկանի տեղակալ Ն. Խաչիկյանը ներկայացրեց իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում մագիստրատուրայում 2013-2014թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփ արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, ներկայացված ցուցանիշների հետ կապված, անդրադարձավ քննությունների, ստուգարքների անցկացման ժամանակ ուսանողների, մագիստրանտների կողմից ժամանակակից տեխնիկական միջոցներից օգտվելու խնդրին՝ նպատակահարմար համարելով նշված խումբ ուսանողների, մագիստրանտների նկատմամբ կիրառել կարգապահական ներգործության խիստ միջոցներ: Առաջարկն արժանացավ ներկաների հավանությանը:

Արտահայտվեց նաև Տ. Բարսեղյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունելի գիտություն:

Հաղորդումը կցվում է արձանագրությանը:

8. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՅԵՐ

8.1. ԼՍԵՑԻՆ. <Հայոց լեզու և խոսքի մշակույթ> ուսումնական դասընթացի ծրագրին հավանություն տալու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, նշելով, որ իրավագիտության ֆակուլտետում «Հայոցլեզու և գրականություն» ուսումնական դասընթացի դասավանդման փնտռիկ կարգադրման հետևանքների վերաբերյալ հարցը ներառված է եղել ֆակուլտետի գիտական խորհրդի սույն թվականի մարտի 21-ի նիստի օրակարգում, և ԵՊՀ հայոցլեզվի ամբիոնի վարիչ, պրոֆ. Յու. Ավետիսյանի մասնակցությամբ նշված հարցի քննարկման արդյունքում նպատակահարմար է համարվել փոփոխել սույն դասընթացի վերաբերյալ լուրջ և կազմել դասընթացի նոր ծրագիր, ինչն, ըստ էության արվել է, առաջարկեց հավանություն տալ ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի կողմից ներկայացված <Հայոց լեզու և խոսքի մշակույթ> ուսումնական դասընթացի ծրագրին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հավանություն տալ <Հայոց լեզու և խոսքի մշակույթ> ուսումնական դասընթացի ծրագրին:

8.2. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկ. Վիգեն Վլադիմիրի Քոչարյանին ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ թեկնածուականատենախոսությունը եկավարելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Կ. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվառնելով Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը, ինչպես նաև հանգամանքը, որ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանն ունի 20-ից ավելի հրատարակված գիտական աշխատանքներ դիմել ԵՊՀ ռեկտորատին՝ միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին թույլատրել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ Վիգեն Վլադիմիրի Քոչարյանին ղեկավարել ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Անի Սիմոնյանի՝ «Ձարգացման իրավունքի հայեցակարգը ժամանակակից միջազգային իրավունքում» վերաբերյալ թեկնածուականատենախոսությունը ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ:

8.3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդՎարդուշ Եսայանի թեկնածուական ատենախոսությանթեմայի վերտառության ճշգրտման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Վ. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա.Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդՎարդուշ Եսայանի թեկնածուական ատենախոսությանթեմայի վերտառությունը հաստատել «Տնօրինչականության սկզբունքը և տնօրինչականության գործողությունները քաղաքացիական դատավարությունում» խմբագրությամբ:

Բ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.4. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Վահագն Դավաթյանի թեկնածուական ատենախոսությանթեմայի վերտառության ճշգրտման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Վ. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա.Քաղաքացիական դատավարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Վահագն Դավաթյանի թեկնածուական ատենախոսությանթեմայի վերտառությունը հաստատել «Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ որպես դատական ակտերի հարկադիր կատարման միջոց» խմբագրությամբ:

Բ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.5. ԼՍԵՑԻՆ.Իրավագիտությանֆակուլտետիմեթոդականխորհրդիմիջնորդությունը՝ ըՊետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ա. Գ. Վաղարշյանի և իրավ. գիտ. թեկնածու Ն. Դավթյանի համահեղինակությամբ պատրաստված «Իրավունքի կենսագործման տեսագործնական հիմնախնդիրները» վերտառությամբմենագրությունը հրատարակությաներաշխավորելումասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.Գ. Հովսեփյանը, Ա. Մարգարյանը,Է. Շաթիրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.ՀաշվիառնելովՊետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի 2014 թվականի մայիսի 23-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ հաստատված միջնորդությունընֆակուլտետիմեթոդականխորհրդիդրականեզրակացությունը, ինչպեսևնաևայն, որ«Իրավունքի կենսագործման տեսագործնական հիմնախնդիրները» վերտառությամբ մենագրությունը շարադրված էպատշաճգիտականմակարդակով, երաշխավորելայն հրատարակության:

8.6. ԼՍԵՑԻՆ.Իրավագիտությանֆակուլտետիմեթոդականխորհրդիմիջնորդությունը՝ ըՊետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ա. Գ. Վաղարշյանի «Հայաստանի առաջին Հանրապետության օրենսդիր իշխանության

համակարգը /1918-1920թթ./», «Հայաստանի առաջին Հանրապետության գործադիր իշխանության համակարգը /1918-1920թթ./ և «Հայաստանի առաջին Հանրապետության դատական իշխանության համակարգը /1918-1920թթ./ վերտառություններով մենագրությունները (համապատասխան փոփոխություններով) վերահրատարակությաներաշխավորելումսին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.Գ. Ղազինյանը, Գ. Հովսեփյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.ՀաշվիառնելովՊետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի 2014 թվականի մայիսի 23-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ հաստատված միջնորդությունընֆակուլտետիմեթոդականխորհրդիդրականեզրակացությունները՝ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ա. Գ. Վաղարշյանի «Հայաստանի առաջին Հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը /1918-1920թթ./», «Հայաստանի առաջին Հանրապետության գործադիր իշխանության համակարգը /1918-1920թթ./ և «Հայաստանի առաջին Հանրապետության դատական իշխանության համակարգը /1918-1920թթ./ վերտառություններով մենագրությունները (համապատասխան փոփոխություններով) երաշխավորել վերահրատարակության:

Խորհրդինախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդիքարտուղար

Է. Շաթիրյան

